


գտնուէր՝ առնողներ պիտի լինէին, կըսէ մեր թղթակիցը:

Շուայլութիւնը մէկդի թողումք առ այժմ. ստրկի պակասութեան նայիմք: — Ոմանք կարծեն թէ այժմու ստակներուն եւրոպայի մէջ քաշուելուն գլխաւոր եւ մի միայն պատճառ սակարաններն են, այսինքն պուրս, պօրսա, պիլոժա ըստած տեղերը, ուր որ ամէն տեսակ գրամական գործողութիւններ կընեն աշխարհիս երեւելի սեղանաւորները (պանքիրները, սարաֆները), վաճառականները, մեծամեծ ապրանքի տէրերը. ուստի եւ սարսափած աչքով մը կնային մեր այս տեղ գըրած պատկերին վրայ եւս, որ Փարիզու սակարանն է: — Այս անիծեալ շէնքն է կըսեն, գրամական անտանելի սողին անսպառ եւ մի միայն աղբիւրը, այս պալատն է կըսեն, այն գեւերուն բնակարանը՝ ուր կթագաւորէ մամոնան ու բոլոր աշխարհքս կկառավա-

րէ . . . Բայց մեք չեմք կրնար ըսել թէ կատարեալ իրաւունք ունին այս ըսողները, եւ մեր խօսքը յաջորդ յօդուածներուն մէջ պարզ կերպով հասկըցընել կջանամք:

Առ այժմ այսքանը միայն ըսեմք որ Գաղղիոյ մէջ այժմու գրամոց պակասութեան գլխաւոր պատճառն է այն տեղի զինուորական պատրաստութեանց համար եղած ծախքը: Անգղիոյ մէջ՝ Հնգկաստանի անցեալ եւ ներկայ վիճակը եւ Ամերիկայի քաղաքական պատերազմը. Աւստրիոյ մէջ՝ տէրութեան այժմու կարգադրութիւններուն անհաստատութիւնը. Տաճկաստանի մէջ՝ ազգային գրամատան մը մինչեւ հիմա չձեւանալը. Ռուսաստանի մէջ՝ արեւելեան պատերազմին տուած վրնասները, եւ այլն: Իսկ սակարանները այս ամենայն պատճառներուն մէկտեղ ժողովուած ու հետեւանքներուն յայտնուած տեղերն են:



1862 ՏԱՐԻՈՅՍ ՄԷՉ

ՊԱՏԱՀԵԼՈՒ ԱՐԵՒՈՒՆ ԵՒ ԼՈՒՍՆԻՆ ԽԱԻԱՐՄՈՒՆՔՆԵՐԸ

Այս տարի հինգ խաւարմունք պիտի պատահին. երեքը արեւու, երկուքը լուսնի. բայց ամէնքն ալ անտեսանելի են թէ՛ Պօլիս եւ թէ՛ Խրիմ: Միայն Նոյեմբերի 24-ին լուսնական խաւարման սկիզբը պիտի տեսնուի Պեսարապիոյ հիւսիսային արեւմտեան կողմերը:

Ա. ՄԱՅԻՍԻ 31. — Բոլորական խաւարումն լուսնի, որ պիտի տեսնուի յմերիկա. սկզբնաւորութիւնը պիտի տեսնուի նաեւ Ափրիկէի արեւմտեան կողմը, եւ վերջաւորութիւնը Աւստրալիոյ արեւելեան կողմը:

Բ. ՅՈՒՆԻՍԻ 15. (1) — Մասնական խաւարումն արեւու, որ պիտի տեսնուի Մատակասկար կղզին

1 Եւ ոչ յունիսի 5-ին, ինչպէս որ տպուած է վենետկոյ օրացուցին մէջ:

Եւ Ափրիկէի ու Աւստրալիոյ արեւմտեան կողմերը:

Գ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 9. — Մասնական խաւարումն արեւու, որ պիտի տեսնուի միայն Հարաւային Ովկիանոսին մէջ:

Դ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 24. — Բոլորական խաւարումն լուսնի, որ պիտի տեսնուի Ատլանտեան Ովկիանոսին մէջ: Սկզբնաւորութիւնը պիտի տեսնուի նաեւ եւրոպայի ու Ափրիկէի արեւմտեան կողմերը, եւ վերջաւորութիւնը Ամերիկայի արեւելեան կողմը:

Ե. ԳԵՆՏԵՄԲԵՐԻ 9. (1) — Մասնական խաւարումն արեւու, որ պիտի տեսնուի գրեթէ բոլոր Ասիոյ մէջ, միայն Սիպիր, Արաբիա եւ փոքր Ասիա պիտի չտեսնուի:

1 Եւ ոչ դեկտեմբերի 19-ին, ինչպէս որ տպուած է մեր օրացուցին մէջ:

